


Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՀՄ 2010 թ. թիվ 12

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ "ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ" Է ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական կենսաթոշակների մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Եկամտային հարկի մասին», «Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքների փաթեթի նախագծի քննարկման կապակցությամբ հոկտեմբերի 12-ին ՀԱՄԿ-ում տեղի ունեցավ լայն քննարկում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ա. Ասատրյանի, ՀՀ ֆինանսների փոխնախարար Վ. Արամյանի և նույն նախարարության վարչության պետ Կ. Թամազյանի, ՀՀ կենտրոնական բանկի մասնագետ Վ. Շահնազարյանի մասնակցությամբ: Քննարկմանը մասնակցում էին ՀԱՄԿ-ի անդամ կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունների նախագահներ, ՀԱՄԿ-ի և

ՃՀՄ-ների աշխատակազմերի ներկայացուցիչներ և արհմիութենական կազմակերպությունների նախագահներ:

Այնուհետև, հարց ու պատասխանի միջոցով ակտիվ քննարկում ծավալվեց ներկայացված նախագծի շուրջ: Արհմիությունների ներկայացուցիչները տարակուսեցին, որ ներկայացվող համակարգը կապահովի արժանապատիվ ծերություն ապահովող կենսաթոշակ: Հանդիպումը եզրափակեց ՀԱՄԿ-ի նախագահ Է. Թումասյանը:

Քննարկումը լուսաբանվեց հանրապետության «Երկիր մեդիա», «Երևան», «Հայթիվի», «Կենտրոն» հեռուստաընկերություններով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԴԱՐՁՅԱԼ ՉԵՆ ՈՒՆԵՆԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Մեր ընթերցողները քաջատեղյակ են քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը բարձրացնելու ուղղությամբ ճյուղային միության ձեռնարկած քայլերի ու պատասխանների մասին: Խնդրի լուծումը անհրաժեշտ ու անխուսափելի համարելով՝ ՃՀՄ նախագահը դարձյալ գրությամբ դիմեց ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանին: Ստորև ներկայացնում ենք ՃՀՄ նախագահ Ե. Հակոբովայի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Շահնազարյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Պետրոսյանի կողմից ի պատասխան ստացված գրությունները:

Հայաստանի Հանրապետության վարչապետ պարոն Տ.Սարգսյանին

Հարգարժան պարոն վարչապետ

Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն քաղաքացիական ծառայողների կողմից բազմաթիվ ահազանգեր են հասնում իրենց բազային աշխատավարձի բարձրացման պահանջի վերաբերյալ:

Նկատի ունենալով, որ նվազագույն աշխատավարձի չափը հանրապետությունում սահմանված է 30000 դրամի չափ, իսկ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը կազմում է 40000 դրամ, նաև այն, որ գազի գնի թանկացման հետ փոխկապակցված թանկացել են ջրի, էլեկտրաէներգիայի, կենսապահովման առաջին անհրաժեշտության և բոլոր՝ հատկապես ներմուծվող ապրանքների գները /2010թ. 8 ամսվա կտրվածքով հանրապետությունում սպառողական գների ինդեքսը կազմում է 7,7 %/՝ ճյուղային հանրապետական միության նախագահության անունից կրկին դիմում եմ Ձեզ՝ 2011թ. ՀՀ պետական բյուջեում նախատեսելու քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացում:

Հարգանքով՝

Ճյուղային հանրապետական միության նախագահ Ե. Հակոբովա

*Հայաստանի պետիմնարկների, տեղական
ինքնակառավարման մարմինների և հասարակական
սպասարկման աշխատողների արհեստակցական
կազմակերպությունների ճյուղային հանրապետական
միության նախագահ
տիկին Ե. Հակոբովային*

Հարգելի տիկին Հակոբովա

ՀՀ ֆինանսների նախարարությունը քննարկել է Ձեր 28.09.2010թ. N 78-01 գրությամբ բարձրացված հարցը՝ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման վերաբերյալ և հայտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված <ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքի նախագծում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը հաշվարկելիս, էլնելով պետական բյուջեի հնարավորություններից, հիմք է ընդունվել քաղաքացիական ծառայողների 40.0 հազար դրամ բազային պաշտոնային դրույքը՝ հաշվի առնելով <Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճը:

Հարգանքով՝ Ա. Շահնազարյան

*Հայաստանի պետիմնարկների, տեղական ինքնակառավարման
մարմինների և հասարակական սպասարկման
աշխատողների արհեստակցական կազմակերպությունների
ճյուղային հանրապետական միության նախագահ
տիկին Ե. Հակոբովային*

Հարգելի տիկին Հակոբովա

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ղեկավարվելով “Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի N1932-Ն և ՀՀ Կառավարության 2003թվականի ապրիլի 23-ի N 572-Ն որոշումներով՝ յուրաքանչյուր տարի ՀՀ Կառավարություն է ներկայացնում քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց:

2010թ. զեկույցում (ՀՀ Կառավարություն է ներկայացվել 2010թ. հուլիսի 30-ին) կատարված աշխատավարձերի վերլուծությունները դարձյալ վկայում են համակարգում բազային աշխատավարձի բարձրացման անհրաժեշտության մասին: ՀՀ տնտեսության վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված՝ ՀՀ պետական բյուջեում բավարար միջոցների բացակայության պատճառով, 2011 թվականին քաղաքացիական ծառայողների և ողջ պետական կառավարման համակարգի աշխատողների աշխատավարձի բարձրացում չի նախատեսվել:

Հարգանքով՝

Ա. Պետրոսյան

Ա Ն Ց ՈՒ Դ Ա Ր Զ

• 2010թ. ՃՀՄ նախագահ Ե. Հակոբովան արժանացավ Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի պատվոգրի՝ արհմիության անդամների իրավունքների և շահերի պաշտպանության արդյունավետ և ակտիվ երկարամյա աշխատանքի, ԱՊՀ արհմիությունների միջև համագործակցության ու բարեկամության ամրապնդման համար:

• Կայացավ Արմավիրի տարածքի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման

աշխատողների արհեստակցական կազմակերպության հիմնադիր ժողովը: Որոշվեց ղեկավար մարմինների կազմը, հաստատվեց կազմակերպության կանոնադրությունը, ընտրվեց կազմակերպության նախագահ՝ Աբրահամ Մարտիրոսյանը: Շնորհավորում ենք պրն. Մարտիրոսյանին արհմիության նախագահի պարտականություններն ստանձնելու կապակցությամբ և մաղթում ենք ակտիվ ու բեղմնավոր աշխատանք:

• Ճյուղային հանրապետական միությունը ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնի հետ համատեղ անցկացրեց սեմինար ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության երիտասարդ արհմիության անդամների համար “Արհմիության դրդապատճառները” թեմայով՝ արհմիության մասին հասարակության, մասնավորապես երիտասարդության շրջանում տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով: Ճյուղային միությունը նմանատիպ, այս անգամ արտագնա սեմինար անցկացրեց նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երիտասարդ արհմիության անդամների համար: Նախատեսվում են նման սեմինարներ անցկացնել առաջիկայում Երևան քաղաքի անդամ կազմակերպությունների արհմիության անդամների համար:

• ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնի աջակցությամբ ՃՀՄ անդամ տարածքային միությունների /Ալավերդի, Նոյեմբերյան, Իջևան, Ամասիա, Սևան/ մի շարք արհմիության անդամներ իրազեկվել են միգրացիայի, թրաֆիքինգի խնդիրներին:

• ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների ընդունումից հետո Ճյուղային հանրապետական միությունը անցկացրեց մի շարք սեմինարներ Երևան քաղաքի, Թալինի, Արարատի,

Արագածի, Հրազդանի տարածքների, Գեղարքունիքի մարզի անդամ կազմակերպությունների արհմիության անդամների համար “ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները” թեմայով, որի շուրջ պարզաբանումներ տվեց ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի վարիչ Միքայել Փիլիպոսյանը: Սեմինարներին մասնակցել են ավելի քան 150 աշխատողներ, մասնավորապես արհեստակցական կազմակերպությունների ղեկավարներ, գործատուներ, հաշվապահներ, կադրերի գծով և այլ աշխատողներ: Բարձրացված հարցերը բազմաթիվ էին, որոնց տրվել են սպառիչ պատասխաններ:

Վերոնշյալ թեմայով սեմինարներ անցկացվելու են նաև մյուս տարածքներում:

• ՃՀՄ աշխատանքի պաշտպանության գլխավոր մասնագետ Ա.Սաստրյանը այցելեց Եղեգնաձոր՝ տեղում ծանոթանալու արհմիության անդամների աշխատանքի պայմաններին: Տարածքային միության նախագահ Ս.Ավետիսյանի հետ միասին մասնակցեցին նաև Եղեգնաձորի քաղաքապետարանի և Աղավնաձորի գյուղապետարանի աշխատողների ժողովներին, որտեղ քննարկվեց արհմիությանը անդամակցելու հարցը: Ժողովից հետո այդ կազմակերպությունների ղեկավարների հետ կնքվեցին կոլեկտիվ պայմանագրեր:

Սոցիալական գործընկերությանը նվիրված առաջին կոնֆերանս

2010թ. սեպտեմբերի 29-ին Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից կազմակերպվեց առաջին ազգային կոնֆերանսը՝ նվիրված սոցիալական գործընկերությանը: Կոնֆերանսին կազմակերպիչների կողմից հրավիրված էին՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Է. Թումասյանը, նախագահի տեղակալ Բ. Խարատյանը, ուսումնահետազոտական կենտրոնի ղեկավար-պատասխանատու քարտուղար Լ. Խաչատրյանը, սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի վարիչ Կ.Մադոյանը, ինչպես նաև 12 Ճյուղային հանրապետական միությունների նախագահներ, այդ թվում և Հայաստանի պետիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների Ճյուղային հանրապետական միության նախագահ Ե.Հակոբովան:

Հանրապետությունում գործընկերության վիճակի մասին ելույթ ունեցավ Բ. Խարատյանը, ՀՀ Արագածոտնի մարզում սոցիալական գործընկերության զարգացման ծրագրի նվաճումների վերաբերյալ՝ Կ. Մադոյանը: Քննարկումների ժամանակ ելույթ ունեցավ Ժ.Թորոսյանը:

Կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին սոցիալական գործընկերության բնագավառում առկա ձեռքբերումները, խնդիրները և հետագա զարգացման վերաբերյալ առաջարկությունները, ՀՀ Արագածոտնի մարզում սոցիալական գործընկերության առաջին փորձը, որտեղ Ապարանի քաղաքապետարանի, Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների Ապարանի տարածքային արհեստակցական կազմակերպության և Արագածոտնի մարզի գործատուների տարածքային միության միջև ստորագրվել է սոցիալական գործընկերության տարածքային կոլեկտիվ համաձայնագիր:

Մ Ի Ջ Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Կ Ա Պ Ե Ր

2010 թ. մայիսի 12-ին ՈԻԿրաինայի Կիև քաղաքում կայացավ պետհիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի /ԱՄՖ/ Խորհրդի հերթական նիստը, որին մասնակցեց և Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ե. Հակոբովան: Օրակարգի համաձայն քննարկվեցին հետևյալ հարցերը՝ Լատվիայի պետհիմնարկների, ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների և ֆինանսների արհմիությունը ԱՄՖ-ի անդամ ընդունելու մասին, Ֆեդերացիայի Խորհրդի կազմում փոփոխությունների մասին, ՈԻԿրաինայի պետհիմնարկների աշխատողների արհմիության աշխատանքի փորձի մասին, 2009 թ. Ֆեդերացիայի Խորհրդի ֆինանսա-տնտեսական գործունեության վերստուգման արդյունքների մասին, 2009թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարման և 2010թ. նախահաշվի մասին, 2009թ. Ֆեդերացիայի Խորհրդի տարեկան հաշվետվության և հաշվապահական բալանսի մասին, 2009թ. արհմիության անդամների թվաքանակի մեծացման համար լավագույն անդամ կազմակերպության մրցույթի արդյունքների մասին, Արհմիությունների Միջազգային Ֆեդերացիայի 5-րդ Կոնգրեսում Ֆեդերացիայի նախագահ Վ.Սավչենկոյի զեկույցում շարադրած

առաջարկությունների և դիտողությունների իրականացման միջոցառումների մասին, ԱՄՖ-ի միասնական էլեկտրոնային տվյալների բազայի ձևավորման մասին, ԱՄՖ-ի Խորհրդի թողարկվող տեղեկագրի կատարելագործման մասին, Ֆեդերացիայի վիճակագրական հաշվետվության մասին:

Քննարկված հարցերի շուրջ ընդունվել են համապատասխան որոշումներ:

2010 թ. օգոստոսի 19-ին Մոսկվայում կայացավ պետհիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի Խորհրդի նիստ, որին մասնակցեց և Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ե. Հակոբովան: Օրակարգի համաձայն քննարկվել են հետևյալ հարցերը՝ Ֆեդերացիայի կազմի փոփոխությունների մասին, անդամ կազմակերպությունների խնդիրների մասին, 2010 թվականի աշխատանքային պլանի կատարման, 2011թ. աշխատանքային պլանի հաստատման մասին, 2011թ. ԱՄՖ անդամ կազմակերպությունների անդամավճարի չափի և վճարման կարգի մասին, ԱՄՖ-ի համերաշխության հիմնադրամի մասին, ԱՄՖ-ի նոր փոխնախագահ ընտրելու մասին: Քննարկված հարցերի վերաբերյալ ընդունվել են համապատասխան որոշումներ:

Հ Ա Ր Ց - Պ Ա Տ Ա Մ Խ Ա Ն

“Իմ աշխատանքային պայմանագրով նախատեսված է վճարել գիշերային աշխատանքի համար հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես չափով: Սակայն աշխատանքային օրենսգրքում տեղի ունեցած փոփոխություններից հետո ղեկավարությունը գտնում է, որ համաձայն 184 հոդվածի, պետք է վճարի ինձ հավելում գիշերային աշխատանքի համար ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով”:

- *Չնայած աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածը սահմանում է գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, հավելում ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով, սակայն Աշխատանքային օրենսգրքի 84.1 հոդվածի համաձայն՝ “Եթե աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք կամ այլ նորմատիվ ակտ, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոններն են սահմանում, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա: Օրենսդրությամբ ավելի բարենպաստ պայմաններ սահմանվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանեցվի օրենսդրության պահանջներին”:*